



Գևորգ Էսին

Լորկայի աղոթքը

Մեղավոր էլ չեն նրանք, տե՛ր, գուցե,
Իմ թշնամիներն այս՝ ո՛չ երգեցիկ-
Թե սոխա~կ էիր դու ինձ ստեղծել,
Ինչո՞ւ ագռավի երա՛ն նետեցիր.
Թե ճերմա~կ էիր, տե՛ր, ինձ ստեղծել,
Ինչ գործ ունեի այս սև երամում,
Ուր ամեն սև հանք փորձեր ինձ կտցել-
Ճերմակը կարծած գո~ւյնը թշնամու...

Եթե պիտի ինձ թողնեիր կտցել
Եվ արյունվա ցա~ծ նետել վերից,
Ինչո՞ւ կամեցար հենց այստե՛ղ գցել՝
Այս վտառի՛ մեջ իժ ու օձերի...

Չ՛է որ հավքերը, գիտե~ս, իմաստո՛ւն,
Սողունների~ց են երբեմն սերել,
Եվ ամեն սողուն, նախանձը սրտում,
Թռչունի ճախրը չի~ կարող ներել.

Եվ, ինչքան էլ խե~ղճ լինի իմ առջև,
Նրանո՛վ է հենց հգոր ինձանից,
Որ,- անգո~ր ինձ պես ճախրել ու թռչել,-

Վախ չունի կյանքում նաև... անկումի~ց..

Մեզավո~ր էլ չեն նրանք, տե՛ր, գուցե,

Իմ թշնամիներն այս` ոչ երգեցիկ.

Թե սոխա~կ էիր դու ինձ ստեղծել,-

Ինչո՞ւ ազոավի երա՛ն նետեցիր...